

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Ազգային ժողովի խորհրդի
2018 թվականի հոկտեմբերի 4-ի թիվ 055-L որոշման

Ժամկետացանկ

Ազգային ժողովում մշտական հանձնաժողովներում և դրանց համատեղ նիստերում «Հայաստանի Հանրապետության 2019 թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծի նախնական քննարկումների անցկացման, առաջարկների ներկայացման եւ Կառավարության կողմից փոփոխություններ կատարելու

1. Երկուշաբթի, 29 հոկտեմբերի 2018թ., ժ.10.00

ՀՀ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների համատեղ նիստ

Օրակարգը՝

1. «Հայաստանի Հանրապետության 2019թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծի քննարկում.

- օրենքի նախագծի մշակման սկզբունքները և նախագծի հիմքում դրված հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները (գնաճի սցենարը, բյուջեի դեֆիցիտը և նրա ծածկույթը, արտաքին և ներքին պարտքը),
- եկամուտների ձևավորում (հարկային և մաքսային քաղաքականությունը),
- բյուջեի ծախսերի կառուցվածքը և ծախսային քաղաքականությունը (սոցիալական հարցերի լուծումը բյուջեում և դոտացիաներ համայնքներին),
- բյուջեի կատարման համար անհրաժեշտ օրենսդրական ապահովումը,

2. «Հայաստանի Հանրապետության 2019թ. պետական բյուջեի մասին » ՀՀ օրենքի նախագծում նախատեսված եկանուտներ և ծախսեր՝ ֆինանսների նախարարություն,

3. «Հայաստանի Հանրապետության 2019թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ ՀՀ կենտրոնական բանկի եզրակացության քննարկում,

4. ՀՀ կենտրոնական բանկի 2019թ. վարչական ծախսերի և կապիտալ ներդրումների նախագծի քննարկում:

Զեկուցողներ՝ ՀՀ ֆինանսների նախարար Ա.Զանջուղազյան
ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա.Զավադյան

**Հրավիրվում են՝ Վարչապետ Ն.Փաշինյանը
Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար
Մ.Թանդիլյանը
Վիճակագրական կոմիտեի նախագահ
Ս.Մնացականյանը**

2. Երեքշաբթի, 30 հոկտեմբերի 2018թ., ժ.10.00

ՀՀ Ազգային ժողովի տնտեսական հարցերի ու ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստ

Օրակարգը՝

1. «Հայաստանի Հանրապետության 2019թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծում նախատեսված եկամուտների ձևավորում, հարկային և մաքսային քաղականություն:
2. «Հայաստանի Հանրապետության 2019թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծում նախատեսված եկամուտներ և ծախսեր՝ արդյունաբերություն, տրանսպորտ և կապ, էներգետիկա և բնական պաշարներ, սակագնային քաղաքականություն, տնտեսական մրցակցության պաշտպանություն, կադաստր, քաղաքաշինություն և ջրային տնտեսություն:

Զեկուցողներ՝ ՀՀ ֆինանսների նախարար Ա.Զանջուղազյան

Պետական եկամուտների կոմիտեի նախագահ Դ.Անանյան
Տնտեսական զարգացման և ներդրումների նախարար
Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների
նախարար
Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների
նախարար

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահի տեղակալ Մ. Սողոմոնյան
ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի նախագահ Ա.Շաբոյան
Անշարժ գույքի կադաստրի կոմիտեի ղեկավար Ս.Պետրոսյան
Քաղաքաշինության կոմիտեի նախագահ Ա.Էլոյան
ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային կոմիտեի նախագահ Ի. Գաբայան

Հրավիրվում են՝ Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Կ.Արեյանը:

3. Չորեքշաբթի, 31 հոկտեմբերի 2018թ., ժ.10.00

ՀՀ Ազգային ժողովի պետական-իրավական և մարդու իրավունքների պաշտպանության հարցերի ու ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստ

Օրակարգը՝

«Հայաստանի Հանրապետության 2019թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծում նախատեսված եկամուտներ և ծախսեր՝ իշխանության պետական և դատական մարմիններ, մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ:

Ձեկուցողներ՝ ֆինանսների նախարար Ա.Ջանջուղազյան

Հանրապետության նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Է.Տարասյան
ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավար – գլխավոր քարտուղար Ա.Սաղաթեյան
Վարչապետի աշխատակազմի ղեկավար Է.Աղաջանյան
ՀՀ Սահմանադրական դատարանի աշխատակազմի ղեկավար Վ.Վարդանյան
ՀՀ բարձրագույն դատական խորհուրդ՝ ՀՀ դատական դեպարտամենտի ղեկավար Կ.Փոլադյան
Արդարադատության նախարար Ա.Ջեյնալյան
ՀՀ գլխավոր դատախազ Ա.Դավթյան
ՀՀ քննչական կոմիտեի նախագահ Հ.Գրիգորյան
ՀՀ հատուկ քննչական ծառայության պետ Ս.Խաչատրյան
ՀՀ հաշվեքննիչ պալատի նախագահ Լ. Յոլյան
ՀՀ դատական դեպարտամենտի ղեկավար Կ.Փոլադյան
ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ

S.Մուկուչյան
ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Ա. Թաթոյան

4. Հինգշաբթի, 1 նոյեմբերի 2018թ., ժ. 10.00

Ազգային ժողովի արտաքին հարաբերությունների ու ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստ

Օրակարգը՝

«Հայաստանի Հանրապետության 2019թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծում նախատեսված եկամուտներ և ծախսեր՝ ՀՀ արտաքին գործերի նախարարություն, միջազգային կազմակերպություններին անդամակցելու վճարումներ և սփյուռքի հարցեր:

Զեկուցողներ՝ Ֆինանսների նախարար Ա. Զանջուղազյան
Արտաքին գործերի նախարար Զ. Մնացականյան
Սփյուռքի նախարար Մ. Հայրապետյան

5. Հինգշաբթի, 1 նոյեմբերի 2018թ., ժ. 13.00

Ազգային ժողովի գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության և սպորտի հարցերի ու ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստ

Օրակարգը՝

«Հայաստանի Հանրապետության 2018թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծում նախատեսված եկամուտներ և ծախսեր՝ գիտություն, կրթություն, մշակույթ, սպորտ, երիտասարդություն և տեղեկատվություն:

Զեկուցողներ՝ Ֆինանսների նախարար Ա. Զանջուղազյան
Կրթության և գիտության նախարար Ա. Հարությունյան
Մշակույթի նախարար Լ. Մակունց
Սպորտի և երիտասարդության հարցերի նախարար
ՀՀ հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի

Նախագահ Գ. Բունիայան
ՀՀ հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի
Նախագահ Ռ.Ջաղինյան

**Հրավիրվում են՝ Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Կ.Արեյանը
Կրթության և գիտության նախարարության գիտության
կոմիտեի նախագահ Ս. Հարությունյանը**

6. Ուրբաթ, 2 նոյեմբերի 2018թ., ժ. 10.00

**ՀՀ Ազգային ժողովի եվրոպական ինտեգրման հարցերի ու ֆինանսավարկային և
բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստ**

Օրակարգը՝

«Հայաստանի Հանրապետության 2019թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի
նախագծում նախատեսված եկամուտներ և ծախսեր՝ եվրոպական ինտեգրում:

Զեկուցողներ՝ Ֆինանսների նախարար Ա.Ջանջուղազյան
Արտաքին գործերի նախարար Զ.Մնացականյան

Հրավիրվում է՝ Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարը

7. ա) Ուրբաթ, 2 նոյեմբերի 2018թ., ժ. 12.00

**ՀՀ Ազգային ժողովի պաշտպանության և անվտանգության հարցերի ու
ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովների
համատեղ նիստ**

Օրակարգը՝

«Հայաստանի Հանրապետության 2019թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի
նախագծում նախատեսված եկամուտներ և ծախսեր՝ արտակարգ իրավիճակներ,
ոստիկանություն, ազգային անվտանգության ծառայություն:

Զեկուցողներ՝ Ֆինանսների նախարար Ա. Ջանջուղազյան
Արտակարգ իրավիճակների նախարար
ՀՀ ոստիկանության պետ Վ.Օսիպյան
ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնօրեն Ա.Վանեցյան

7. բ) Ուրբաթ, 2 նոյեմբերի 2018թ., ժ. 15.00

ՀՀ Ազգային ժողովի պաշտպանության և անվտանգության հարցերի ու ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստ (նիստը դռնփակ է)

Օրակարգը՝

«Հայաստանի Հանրապետության 2019թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծում նախատեսված եկամուտներ և ծախսեր՝ պաշտպանության նախարարություն և պետական ռեզերվներ:

Զեկուցողներ՝ Ֆինանսների նախարար Ա. Զանջուղազյան
Պաշտպանության նախարար Դ.Տոնոյան
Արտակարգ իրավիճակների նախարար

8. Երկուշաբթի, 5 նոյեմբերի 2018թ., ժ. 10.00

Ազգային ժողովի առողջապահության և սոցիալական հարցերի ու ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստ

Օրակարգը՝

«Հայաստանի Հանրապետության 2019թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծում նախատեսված եկամուտներ և ծախսեր՝ առողջապահություն և սոցիալական ապահովություն, նպաստներ, թոշակներ:

Զեկուցողներ՝ Ֆինանսների նախարար Ա. Զանջուղազյան
Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Մ.Թանդիլյան
Առողջապահության նախարար Ա.Թորոսյան

Հրավիրվում է՝ Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Կ.Արեյանը

9. Երկուշաբթի, 5 նոյեմբերի 2018թ., ժ. 14.00

Ազգային ժողովի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսական և բնապահպանական հարցերի ու ֆինանսավարկային և

բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստ

Օրակարգը՝

«Հայաստանի Հանրապետության 2019թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծում նախատեսված եկամուտներ և ծախսեր՝ տարածքային կառավարման մարմիններ, դոտացիաներ համայնքներին, գյուղատնտեսություն, բնապահպանություն:

Զեկուցողներ՝ Ֆինանսների նախարար Ա. Զանցուղազյան
Գյուղատնտեսության նախարար
Բնապահպանության նախարար Է. Գրիգորյան
Տարածքային կառավարման և զարգացման նախարար Ս. Պապիկյան
Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Կ. Արեյան և մարզպետներ

***Հրավիրվում են՝ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային կոմիտեի նախագահ Ի. Գաբայանը
ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարարության միգրացիոն ծառայության պետ
Ա. Ղազարյանը***

10. Մինչև 8 նոյեմբերի 2018թ. ժ. 18.00

1. ՀՀ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներում «Հայաստանի Հանրապետության 2019թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծի քննարկումների ամփոփում:

2. ԱԺ պատգամավորները, խմբակցությունները և մշտական հանձնաժողովները «Հայաստանի Հանրապետության 2019թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ գրավոր առաջարկությունները ներկայացնում են ԱԺ աշխատակազմ:

11. Ուրբաթ, 9 նոյեմբերի 2018թ. /մինչև ժ. 15.00/

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմը Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներում «Հայաստանի Հանրապետության 2019թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծի քննարկումների արդյունքում ձևավորված գրավոր առաջարկությունները ներկայացնում է ՀՀ կառավարություն:

12. Երեքշաբթի, 13 նոյեմբերի 2018թ.

ՀՀ Ազգային ժողովի վեցերորդ գումարման չորրորդ նստաշրջանի 2018 թվականի նոյեմբերի 14-ին գումարվող հերթական նիստերում «Հայաստանի

**Հանրապետության 2019թ. պետական բյուջեի մասին» օրենքի նախագծի
քննարկում:**

**Հայաստանի Հանրապետության
Ազգային ժողովի աշխատակազմի
ղեկավար-գլխավոր քարտուղար**

Ա. Սաղաթեյան